**3.Հարցում կատարելու մասին**
(Վ.Սարգսյան)

ԵՊԹԴ-ՇՀԱՊՁԲ-17/1-15/3 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի 7.5-րդ կետի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել հարցում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում նշված հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -2, դեմ – 0:*

**4. Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) ներկայացման մասին**
(Վ.Սարգսյան)

Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել սույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -2, դեմ – 0:*

**5.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**
(Վ.Սարգսյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ԵՊԹԴ-ՇՀԱՊՁԲ-17/1-15/3 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) ներկայացման օրը «Երևանի Ալ.Պուշկինի անվան թիվ 8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ, հասցե՝ ք. Երևան, Մոսկովյան 17 հասցեով:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -2, դեմ – 0:*

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Սարգսյան

Հանձնաժողովի անդամ՝ Ն.Ղազարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Հակոբյան: